

## ՀՀ գործարար սիճակագրի վարկանիշային գնահատման հնաստիճիտական հիմքերը

### Անահիտ ԴՐԱՄԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր. գործարար միջավայր, ինստիտուցիոնալ զարգացում, հարկային վարչարարություն, ներդրումային ծարգիր, միջաահմանային առևտուր

Տնտեսության զարգացման ներկա պայանաններում գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք հնարավորություն են տալիս կամ բարձացնել տվյալ երկրի և տնտեսության մրցունակությունը կամ այն դրաձնել ոչ նախընտրելի ներքին և օտարերկրյա ներդրողների համար: Հետևաբար, ցանկացած երկրում անհրաժեշտ է ձևավորել մրցունակ տնտեսություն և ոլորտներ, որտեղ ինստիտուցիոնալ զարգացման հիմքերը կխթանեն ներդրումային ծարգերի իրագործմանը՝ միևնույն ժամանակ շարունակական բարեփոխումներ իրականացնելով ոչ ֆորմալ հարաբերությունների, կոռուպցիայի կրճատման համար<sup>1</sup>:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցում յուրաքանչյուր տարի վերլուծվում և գնահատվում են 189 երկրների գործարար միջավայրի վարկանիշը կամ գործարարությանը զբաղվելու վարկանիշը: Այն ցույց է տալիս գործարարության ծախսերը կամ վարչարարական բեռը և տարբեր են 189 երկրներում՝ ըստ ցուցանիշների: Ուստի, գործարար միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ հիքմերը պայանավորված են գործարար հատվածի մուտքի և ելքի տարբեր արգելքների վերացմանը<sup>2</sup>: Օրինակ, տարբեր երկրներում դրանք գնահատվում են միջազգային կառույցների կողմից /Բլումբերգ - Best for doing business, ՀԲ - doing business/, որոնց հիմքում ընկած է էրնանդո դե Սոտոյի գործարարության վրա ընկնող գործառնական ծախսերի տեսությունը<sup>3 4</sup>: Էրնանդո դե Սոտոն Պերույում գնահատել է տարբեր ընկերություններում հազուստի արտադրության վրա ընկնող ժամանակի և վարչարարական ծախսերը<sup>5</sup>:


<sup>1</sup> Нуреев Р.М., Ахмадеев Д.Р. Классификация неформальной занятости и методы ее оценки // TERRA ECONOMICUS – 2015, 13, – с. 14–29.

<sup>2</sup> Uwe D., Frijters P., Winter-Ebmer R, Reducing Start-up Costs for New Firms The Double Dividend on the Labor Market // Scandinavian Journal of Economics. 2006, N 108 – P. 317–337.

<sup>3</sup> Нуреев Р.М. Очерки по истории институционализма – 2-е изд. – Ростов н/Д, Изд-во “Содействие-XXI век”, 2014, С.322-342.

<sup>4</sup> Barseghyan L. Entry Costs and Cross-Country Differences in Productivity and Output // Journal of Economic Growth – 2008 – N 13 (2) – P.145–67.

<sup>5</sup> Сото Э. Де, Загадка капитала – М Олимп-Бизнес, 2004.



**Գծապատկեր 1. Գործարար միջավայրի կարգավորումը<sup>6</sup>**

Ջարգացնելով Էրնանդո դե Սոտոյի տեսությունը՝ Համաշխարհային բանկը սկսած 2004 թվականից մինչ օրս իրականացնում է գործարարությանը զբաղվելու վարկանիշային գնահատում 189 երկրների տարբեր ոլորտներում ներգրավված ընկերությունների համար: Այդ զեկույցի արդյունքները հնարավորություն են տալիս տվյալ լավագույն և վատթարագույն երկրների միջև կատարել համեմատական գնահատում, և տվյալ երկրում բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման համար կիրառելի դարձնել արագընթաց աճ ունեցող երկրերի փորձը, ինչպես նաև հիմնավորել տվյալ երկրում տնտեսական բարեփոխումների անհրաժեշտությունը<sup>7</sup>: Այսպես, ցանկացած երկրում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում գործարար միջավայրի կարգավորումն իրականացվում է հետևյալ կերպ<sup>8</sup>.

Գծապատկեր 1-ի համաձայն գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է կրճատել բիզնեսի մուտքի արգելքները, ինչպիսիք են գրանցումն ու աշխատողների ընդունումը, այնուհետև՝ իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ շինարարության թուլությունը

<sup>6</sup> Հիմք է ընդունվել "Գործարարությանը զբաղվելը աշխարհում" զեկույցի տվյալները 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

<sup>7</sup> Գործարարությանը զբաղվելը Հայաստանում 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

<sup>8</sup> Calderon C., Chong A., Leon G. Institutional Enforcement, Labor-Market Rigidities, and Economic Performance // Emerging Markets Review. – 2007. – N 8(1). – P. 38–49

թյան, էլեկտրաէներգիայի կայանների միացման, սեփականության գրանցման ընթացակարգերի պարզեցումն ու վարչարարական ռսիկերի վերացումը: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են, այսպես ասած, “սարդային գործարքները”, ինչպսիք են՝ հարկերի վճարումը, միջսահմանային առևտուրը, ինչպես նաև առկա են ֆինանսավորման խնդիրներ՝ վարկավորումը, ներդրողների շահերի պաշտպանությունը:

Համաշխարհային բանկը յուրաքանչյուր տարի ավելացնում է գործարարությամբ զբաղվող երկրների ցանկը և ընթացակարգերի թիվը՝ 2004 թվականին 133 երկրներից 2015թ. հասցնելով 189 երկրների, իսկ 2004թ. 5 ընթացակարգերից 2015թ.ին՝ դրանք հասցնելով 10-ի /Աղյուսակ 1/:

**Աղյուսակ 1. “Գործարարությամբ զբաղվելը” երկրներն ու ընթացակարգերը 2004-20125թթ.<sup>9</sup>**

Տարի	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երկրներ	133	135	155	175	178	181	183	183	183	185	189	189
Ընացակարգեր	5	7	10	10	10	10	10	10	10	10	10	10

2006-2015թթ. “Գործարարությամբ զբաղվելը” զեկույցում ներկայացված են 10 ընթացակարգեր.

1. բիզնեսի գրանցումը,
2. շինարարական թույտվությունը,
3. էլեկտրաէներգիայի կայաններին միացումը,
4. սեփականության գրանցումը,
5. վարկերի ստացումը,
6. ներդրողների շահերի պաշտպանությունը,
7. հարկերի վճարումը,
8. միջսահմանային առևտուրը,
9. պայմանագրերի կիրարկումը,
10. բիզնեսի լուծարումը և սնանկության ճանաչումը:

Ներկայացված ընթացակարգերի ամփոփմամբ տրվում է երկրի գործարար միջավայրի վարկանիշը, ինչը նաև ստեղծում է նախադրյալներ՝ օտարերկրյա ներդրողների ներգրավման, ներդրումային նոր ծրագրերի իրագործ-

<sup>9</sup> Հիմք է ընդունվել “Գործարարությամբ զբաղվելը աշխարհում” զեկույցի տվյալները 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

ման և կայուն տնտեսական աճի ապահովման համար<sup>10</sup>: Չնայած դրական փոփոխությունների, դեռևս գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարագացումը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել հարկերի վճարման, միջսահմանային առևտրի, վարկերի ստացման, պայմանագրերի կիրարկման, ներդրողների շահերի պատպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, սուվերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչփ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով և այլն:

**Աղյուսակ 2. 2007-2014թթ. ՀՀ-ում «Գործարարությամբ զբաղվելը»-ի զեկույցի արդյունքները<sup>11</sup>**

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
քիզնես սկսելու մեկնարկային պայմաններ	84,71	84,77	84,97	90,4	94,34	94,82	94,86	97,51
սեփականության գրանցում	92,89	92,95	93,17	93,25	92,8	92,85	92,96	93
հարկերի վճարում	41,62	40,53	40,62	40,62	40,6	53,57	71,42	74,46
շինարարության թույլտվության տրամադրում	46	59,7	63,92	65,34	64,72	73,99	73,7	73,64
վարկերի հասանելիություն	37,5	68,75	68,75	68,75	68,75	75	75	65
միջսահմանային առևտուր	54,7	61,36	56,81	56,02	63,98	63,94	64,68	64,46
էլեկտրաէներգիայի դյուրինություն	-	-	-	49,45	49,29	49,37	55,98	63,99
ներդրողների շահերի պաշտպանվածություն	50	50	50	50	50	50	63,33	60
պայմանագրերի կիրառում	58,2	58,2	59,24	59,24	59,24	51,45	51,45	53,33
անվճարումակության հարցերի կարգավորում	-	-	-	-	-	-	-	-

Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականից մինչ օրս կատարվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք կարելի է գնահատել դրական և կայացած<sup>12</sup>: Ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցի՝ Հայաստանում 2012-2015 թթ. առավել դյուրին է դարձել հարկերի վճարման գործընթացը՝ միասնական եկամտային հարկի ներդրման արդյունքում, որն իր մեջ ներառում է գործատուների և աշխատողների սոցիալական վճարները և անհատների կողմից վճարվող եկամտահարկը: Աղյուսակով ներկայացնենք 2007-2014թթ. «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցներում Հայաստանի Հանրապետության ցուցանիշները /Աղյուսակ 2/ :

<sup>10</sup> Djankov S, Freund C, Cong S. Pham Trading on Time, Review of Economics and Statistics 2010, N 92 (1), P. 166–173.

<sup>11</sup> Հիմք է ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի տվյալները 2007-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

<sup>12</sup> Հեղինակային մոտեցում:

Կատարելով օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմագործոն ռեգրեսիոն վերլուծություն, որպես ելակետային տվյալներ կարող ենք վերցնել 2007-2013թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները, իսկ որպես ելակետային տվյալների վրա գործարարությամբ զբաղվելու վրա ազդող գործոններ՝ առաջարկելով է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$Y = a_0 + a_1X_1 + a_2X_2 + a_3X_3 + a_4X_4 + a_5X_5 + a_6X_6 + a_7X_7 + a_8X_8 \quad (1)$$

որտեղ՝ Y-ը օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալն է,

$a_0$ -ն հավասարման ազատ անդամն է ,

$a_1, a_2, a_3, a_4, a_5, a_6, a_7, a_8$ -ն հավասարման գործոնային ցուցանիշներն են,

$X_1$ -ն բիզնես սկսելու մեկնարկային պայմաններն են,

$X_2$ -ն սեփականության գրանցումն է,

$X_3$ -ն հարկերի վճարումներն են,

$X_4$ -ն շինարարության թույլտվության տրամադրումն է,

$X_5$ -ն վարկերի հասանելիություն,

$X_6$ -ն միջազգային առևտուր վարելու դյուր-րիությունն է,

$X_7$ -ն ներդրողների պաշտպանվածությունն է,

$X_8$ -ն պայմանագրերի կիրառումն է:

Այսպիսով, մոդել (1)-ի գնահատումից հետո  $R_2$ -ն՝ դետերմինացիայի գործակիցը, ստացվել է հավասար 1-ի: Այն ցույց է տալիս ելակետային Y պարամետրերի փոփոխությունների կախվածությունը ուսումնասիրվող X գործոններից: Դա վկայում է մոդելի որակի մասին, և որքան այն բարձր է, այդքան մոդուլն ավելի լավն է: Անցում կատարելով մոդելի գործակիցներին նշենք, որ  $a_0$  գոծակիցը ցույց է տալիս, թե ինչպիսին կլինի Y-ը, եթե մոդելի բոլոր գործոնները հավասար լինեն 0-ի:  $a_1, a_2, a_3, a_4, a_5, a_6, a_7, a_8$  գործոնները ցույց են տալիս համապատասխանաբար բիզնես սկսելու մեկ-նարկային պայմանների, սեփականության գրանցման, հարկերի վճարում-ների, շինարարության թույլտվության տրամադրման, վարկերի հասանելիության, միջազգային առևտուր վարելու դյուր-րիության, ներդրողների պաշտպանվածության և պայմանագրերի կիրառման ազդեցությունները օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների վրա:

Գնահատումից հետո հավասարումը ստանում է հետևյալ տեսքը.

$$Y = 5213517,204 - 31500,94869X_1 + 24150,39059X_3$$

$$+ 46727,91646X_4 + 31622,99997X_5 + 14829,50285X_6 - 56308,97689X_7 \quad (2)$$

(2) մոդելի արդյունքներից պարզ է դառնում, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների վրա իրենց գերակշիռ ազդեցությունն են ունենում հարկերի վճարումները, վարկերի հասանելիությունը և միջազգային առևտուր վարելու դյուր-րիությունը: ՀՀ հարկային դրույքաչափերը, համեմատած այլ զարգացող և զարգացած երկրների, ցածր մակարդակով են բնութագրվում: Իհարկե, այդ դեպքում չպետք է անտեսել նաև ներդրողների շահերի

պաշտպանության կարևորությունը և անհրաժեշտ է մշակել օրենսդրա-իրավական այնպիսի համակարգ, ինչը ՀՀ տնտեսությունը կդարձնի գրավիչ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

### **Անահիտ ԴՐԱՄԲՅԱՆ**

#### **ՀՀ գործարար միջավայրի վարկանիշային գնահատման ինստիտուցիոնալ հիմքերը**

*Բանալի բառեր. գործարար միջավայր, ինստիտուցիոնալ զարգացում, հարկային վարչարարություն, ներդրումային ծրագիր, միջսահմանային առևտուր*

Տնտեսության զարգացման ներկա պայամաններում գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք հնարավորություն են տալիս կամ բարձացնել տվյալ երկրի և տնտեսության մրցունակությունը կամ այն դարձնել ոչ նախընտրելի՝ ներդրողների համար: Հետևաբար, ցանկացած երկրում անհրաժեշտ է ձևավորել մրցունակ տնտեսություն և ոլորտներ, որտեղ ինստիտուցիոնալ հիմքերը կխթանեն ներդրումային ծրագրերի իրագործմանը՝ միաժամանակ շարունակական բարեփոխումներ իրականացնելով ոչ ֆորմալ հարաբերությունների, կոռուպցիայի կրճատման համար:

### **Анаит ДРАМБЯН**

#### **Институциональные основы рейтинговой оценки бизнес-среды РА**

*Ключевые слова: бизнес-среда, институциональное развитие, налоговое администрирование, инвестиционные программы, налоговая ставка, приграничная торговля*

В современных условиях развития экономики на рейтинг бизнес-среды оказывают влияние различные факторы, позволяющие либо повысить конкурентоспособность данной страны и ее экономики, либо сделать их непривлекательными для отечественных и зарубежных инвесторов© Следовательно, в любой стране необходимо сформировать конкурентную экономику и сферы конкуренции, в которых основы институционального развития стимулируют реализации инвестиционных программ, при одновременном проведении непрерывных реформ, нацеленных на сокращение неформальных отношений, коррупции©

### **Anahit DRAMBYAN**

#### **The rating assessment of institutional business climate**

*Keywords: business environment, institutional development, corruption risks, tax administration, investment programs, tax payments, tax rate, cross-border trade*

Economic development in current business conditions index is influenced by various factors that enable or increase the competitiveness of the economy and the performance or non-preferred domestic and foreign investors. Therefore, every country need to form a viable economy and areas where the institutional foundations stimulate investment programs, reforms, conducting informal relations, corruption reduction.